

տարւյն ժողովուրդը ուզեց այս պատուոյն մաս նակից ըլլալ . որով ուրիշ երկու գանձաւոր հարկ ելաւ աւելցնել : Երկորդ պիւնիկեան պատերազմին ժամանակը գանձաւորաց թիւը ութ ելաւ , ու հետզետէ օրէ օր կ'աւելնայ . ասոնցմէ երկոքը դանչաւորդ + աւաշու անուամբ հռոմ կը կենան : Իրենց էական պաշտօնն է հասարակաց զրամին տեսչութիւնը : Տէրութեան եկամուտը կը հաւաքեն , անոր պիտոյքը կը հոգան , տուգանքը ձեռք կը բերեն , և ելումտից հաշիւը կը բռնին , ուսկից կ'իմացուի իրենց տեսչութեան ուղիղ : Հսկողութիւնը : Իրենց յանձն է դարձեալ հռոմէական Արծուեաց պահպանութիւնը . երբորբանիները արշաւանք մը ետ կը դառնան , Կառնովին տաճարը կը դնեն անոնց նշանները հանդերձ հասարակաց գանձովք , և երբ նորէն բանակը պատերազմի երթալու ձեռք զարոնէ՝ զանոնք դարձեալ զօրավարաց կը յանձնեն : Նոյնպէս Քառակի դանչաւորաց պաշտօնն է գեսպանաց բնակարանը հոգալ , անոնց պիտոյքին խնամք տանիլ , և յանուն հասարակապետութեան գեսպանաց որոշուած ընծաները անոնց յանձնել :

Կը շարունակոի :

### Հեռագրական նորալոր մը :

Երբ աղլանդական հեռագրին պահնը , օր կը կապէր ուղղակի զլուգդիամերիկոյ հետ , հաստատուեցաւ ու լուրջ մատրայի մէջ ծանուցուեցաւ . քանի ը օր ետքը լորտերուն խորհրդարանին ուշակաւոր անդամներէն մէկը հեռարական նորահաստատ պաշտօնարանը երկայցաւ .

— “Պարոն , ըստաւ պաշտօնատէրին , ուզեմ հեռագրական լուր մը զրկել ՚ի Ա. Յովհաննէս Ար-Երկրի :

— Տէր իմ , անշուշտ չէք գիտեր որ եռ ամենայն ինչ բարեկարգուած չէ :

— Դիմուես իմ ովկ ըլլալս . ադլանական հեռագրական ընկերութեան ասն հազար բաժանորդութիւն ուն ես . ահա քեզի երկու հարիւր ուղիւն (5000 ֆր.) , խնդրեմ կատար ինչ որ քեզի ըսեմ :

— Տէր իմ , պատասխանեց պաշտօնատէրն յարգութեամբ , պիտի գիտնաքամէն մէկ բառը վայրկեան մը կ'ուզէ սսնելու , հետեւարար հարցմանդ պա-

տասխանը դրկենէս ետև երկուքուկէս ժամէն առաջ չենք կրնար ընդունիլ :

— Կը սպասեմ :

— Հրամանեցէք , ըսեք ձեր հեռագրական լուրը :

“ Լ ոնտրա , երեկոյեան ժամ 5 .

“ Խյաւրեցէք ինծի ամենէն զօրաւոր կայծն որ ձեր գործիներովը կրնաք գոյացունել , միայն վայրկեան մը առաջ ինծի իմաց տուէք , ” :

“ Աստաւ ու սպասեց ամենայն համբերութեամբ :

“ Խամը եօթնին ու քառասունը հինգ վայրկենին , օր է ըսել , հեռագրական լուրը զրկելէն երկու ժամ ու կէս վերջը , հեռագիրը կը պատասխանէր .

“ Ո . Հովհաննէս Ար-Երկրի .

“ Ո այրկենէ մը կ'ընդունիք ձեր խընդարած կայծը , ” :

“ Ա . Ա . լորտը ծոցէն տուփ մը հանեց ու մէջէն՝ Իլլանայի սէկար մը առնելով կտոր մը արեթ ելեքտրական թելին վրայ բռնեց , օր մէկէն բռնկեցաւ , և անով սէկար վառեց ու ծանրութեամբ մը ծխելով արագունարանէն դուրս ելաւ :

“ Իւս կիսագնտէն այս կերպով կրակ ուզելու լուրը հազիւ թէ տարածուեցաւ անգիտացի ազնուականաց մէջ , ամէնքը ուզեցին բերել տալ այս կրակը , որով պաշտօնարանը խել մը օր բազմութեամբ լցուած էր , որոնք կու գային սէկարնին վառելու 5,000 ֆրանքով . Աւանիկէ ետքն ալ շատ ծխախոտ ծախողներն իրենց խանութին կանթեզներուն ապակիներուն չորս կողմը գրած ունէին ” :

### Վերջին աշխարհահամար Գաղղիոյ :

Ինչպէս օր սովորութիւն է , ամէն հինգ տարին մէյմը բովանդակ Գաղղիա աշխարհահամար կ'ըլլուի . 1861 տարին այս հնգամեայ շրջանին վերջինն ըլլալով , ներկայ տարւոյս առաջին օրը հրատարակուեցաւ նոր աշխարհահա-